№ 288 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29 — 1904 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29 № 288

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒՆՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարությունների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1905** ԹՒԱԿԱՆԻՆ
(33-ՐԴ ՏԱՐԻ)
«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ
ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը՝ նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 բուբլի, եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 բուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի:

Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է մէյն ամսի 1-ից:

Կայսրության ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարությունները ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Գօլսեցի Յառաջիւն Քրիստափորեան և Էլրոս Նշանեան յաւօք սրտի յայտնում բարեկամներին ու ծանօթներին առաջինը՝ իր թանգագին ամուսնու և երկրորդը՝ իր անմոռանալի քրոջ՝

ԻՍԿՈՒՀԻ ՔՐԻՍՏԱՓՈՐԵԱՆԻ

մահը, որ, կարճատև հիւանդությունից յետոյ, տեղի ունեցաւ դեկտեմբերի 28-ի առաւօտեան: Յուղարկաւորության հանդէսը տեղի կունենայ այսօր, ամսի 29-ին, առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից (Մադաւօվսկայա փ., տ. Ռոստոմ Մարտիրոսեանցի) դէպի Վանքի մայր եկեղեցին ու այնտեղից դէպի Յոզիվանքի գերեզմանատուն:
1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սինօդի մի որոշման առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Զինուորի թուղթով տպաւորությունները. Հայոց ներկայացուցիչները Բագուում. Նամակ Խմբագրության. Նամակ խմբագրության. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գօրա-Աբասուրի անկումը. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. Վաքիլբաշին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՆՕԴԻ ՄԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Էջմիածնի Սինօդը մի գեղեցիկ որոշում է կայացրել: Նա վճռել է քննութիւն կատարել Շատախու և Երևանի թեմերում և պարզել այն դրութիւնը, որի մէջ գտնվում են այդ թեմերի հոգևոր առաջնորդների գործերը:

Դա խելացի կարգադրութիւն է, որ կը գործէ նպաստաւոր տպաւորութիւն հասարակութեան վրա: Երբ որ բացակայ են քննութիւնը և հսկողութիւնը, այն ժամանակ հասարակութիւնը դիւրահաւատութեամբ լցուած է ամեն մի աննպաստ լուր հոգևոր վարչութեան գործերի մասին և տրամադիր է լինում գուցէ նոյն իսկ չափազանցնել զեղծումների և զանցառութիւնների աստիճանը, որոնք տեղի են ունեցել:

Երբ որ մի հիմարկութիւն ինքն իրան քննադատում է, ինքն իր պաշտօնեաների և գործակալների վրա հսկողութիւն է կատարում, այն ժամանակ առաջ է գալիս վստահութիւն դէպի այդ հիմարկութիւնը և ամրապնդվում մի հայացք թէ հիմարկութիւնը ինքն իր մէջ կրում է տարրեր կատարելագործվելու և առաջադիմելու:

Սինօդի ներկայ կարգադրութիւնը առում է մեզ այն, որ ոչ մի զեղծում չէ կարող ծածկված և ուրեմն անպատիժ մնալ, որ ոչ մի պաշտօնեայ չէ կարող ազատ զգալ իրան պատասխանատուութիւնից իր գործերի համար:

Անկասկած, շատ կարևոր է, որ քննութիւնները կատարվեն ամենայն անաչառութեամբ և լրջութեամբ, որ քննիչները տրամադրված չը լինեն չափազանցելու կամ նուազացնելու իրողութիւնների նշանակութիւնը և որ մշակված լինեն ոլոր հրահանգներ քննութիւններ կատարելու համար:

Այն օրից, երբ պաշտօնեաները կը զգան, որ կայ աչալուրջ հսկողութիւն նրանց գործառնութիւնների վրա, որ նրանք պատասխանատու են իրանց գործերի համար կանոնաւոր քննութեան առաջ, անշուշտ կը սկսեն զսպվել այն ձգտումները և հակումները, որոնք այնքան ցնաս են հասցրել մեզ անցեալում:

Կան, անկասկած, ազնիւ անձնաւորութիւններ, որոնք առանց հսկողութեան էլ մաքուր և ազնիւ կերպով կը վարեն իրանց պաշտօնները, բայց չէ կարելի նրանց պատճառով հասարակական գործերը և դրամները պատեհականութեան քմահաճոյքին թողնել, լաւ գիտենալով փորձից, որ հասարակական կօնտրոլի պակասութիւնը ունեցել է անմխիթար հետևանքներ ամեն տեղ:

Հիմարկութեան կատարած քննութիւնները միացած հրապարակական քննադատութեան հետ կարող են առաջն առնել ամեն տեսակ զեղծումների և մարդկանց մէջ վստահութիւն ներշնչել դէպի հասարակական հիմարկութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Մեր ընթերցողները արդէն գիտեն, որ գիւղական աշխարհը, վերջապէս, կաղասվի իր դասակարգային առանձնայատուկ և իրաւազուրկ դրութիւնից, որ գիւղացին կը ստանայ այն ընդհանուր վարչական և դատաստանական իրաւունքները, որ ունի պետութեան ոչ-գիւղացի ազգաբնակութիւնը: «Наши Дни» լրագիրը գտնում է, որ գիւղացիներին պէտք է տալ և մի այլ կարևոր թեթեւութիւն՝ իր վիճակը կանոնաւորելու և բարւոքելու համար:

Դասակարգային առանձնացման ջնջումի չափազանց կարևորութիւնը, որի հետ սերտ կապված են գիւղացու քաղաքական ստորացումը և քաղաքացիական իրաւազրկութիւնը, ոչ մի կասկածի չէ ենթարկվում:

—Խուլ ցաւը որ գայ, շատ մարդկանց տընները կը քանդի. ամա մեր տները հալա դեռ շինում ա, տեսնենք՝ չար աչքից հեռու ենք մնում, թէ չէ,—ասաց Գիւլունց Քիքին:

—Դեռ չը եկած, մենք նրանից շահվում ենք էս ա. բոլ-բոլ խմում ենք ու քէֆ անում ամեն օր. եարախտ,—ասաց վաքիլ Հանէս աղին:

—Համ խմենք, համ գործ շինենք. գեղը պահպանենք է, գեղը. խուլ ցաւի ըռեխը ետ տանք, բարձր իշխանութեան հրամանը լաւ կատարենք,—ասաց վաքիլբաշի Աղասին:

Հերթով ամեն հայաթ ու ամեն տուն մտնելով, առողջապահիկ յանձնաժողովը կրկին այցելեց խանութպան Գուրգէնին՝ ստիպելու նրան իբրև թէ մաքրելու իր հայաթը, բայց իսկապէս «փռանգի արաղից» կրկին փորձելու: Գուրգէնի հայաթում աղբակոյտերը մնում էին իրանց տեղերում. բացի այդ չորից նոր աղբ էր դուրս թափած ու հայաթում փռած. գարշահոտութիւնը անկարագրելի էր: Յանձնաժողովի հարցին՝ թէ ինչո՞ւ համար է աղբը, Գուրգէնը պատասխանեց՝ չորացնելու, յետոյ աշնանը խաղողի այգին տանելու համար: Տանուտէր Աղասին յիշեցրեց Գուրգէնին բարձր իշխանութեան հրամանը, ստիպված եղաւ յիշեցնել և այն, որ նա «Գեարիպալդէն» է. ակնարկ արեց անձնաւորութեան մասին, նոյն իսկ գրագիր մահտեսուն իր մօտ կանչեց... Գուրգէնը, լաւ իմանալով նրա ու նրա շքախմբի փորացաւը, ներս հրաւիրեց բոլորին էլ. խմացրեց կարգին, բայց ոչ «փռանգի արաղից», այլ հասարակ նահապետականից: Յանձնաժողովը յուսախաբվեց. Գուրգէնին ջնջում ու գովում էին, բայց առանց որ և է ոգևորութեան: Տանուտէր Աղասին չը կարողացաւ իրան զսպել. դարձաւ Գուրգէնին ու կամացուկ նրա ականջին՝

—Բա նրանից չը կմ՞յ:—Ինչից:—Փռանգի

ՎԱՔԻԼԲԱՇԻՆ

VI

Երբ յանձնաժողովը ճաշկերոյթի նստեց Աւագիմի տանը ու յափշտակվեց նրա գինով, գիւղացիների մեծամտութիւնը, լաւ իմանալով, որ վաքիլները մենացնելու են այնտեղ, թողեց աղբակոյտները ու շտապեց մօտակայ դաշտերը հնձի. գիւղում մնացին ամենաերկչոտները միայն: Հետևեալ օրը վաղ առաւօտվանից յանձնաժողովը դարձեալ շրջել սկսեց գիւղը: Առաջի օրվայ խստութիւնները էլ չէին նկատվում: Տանուտէր Աղասին արդէն քանդել էր իր պասը, խախտել էր իր որոշումը՝ նախ Գուրգէնի տանը, յետոյ Աւագիմի, ուստի ուրիշների առաջարկութիւնները, հիւրասիրութիւնը մերժելը նա անարդարութիւն էր համարում ուղղակի. ամեն տան համարեա մի բան կուլ էր տալիս. մի ուրիշ տեղ արաղ. պատահում էր, որ մի և նոյն տանը համ մէկից էին ճանկ գցում, համ միւսից. նախաճաշում էին պանիր հացով, շուշանով, կաղամբով կամ բոխով. Աստծու տուածից մի բան ճարվում էր նոյն իսկ ամենաաղքատ տանը: Գինու ու արաղի անկանոն խառնուրդը այն հետևանքն ունեցաւ, որ կէսօրից շատ առաջ յանձնաժողովի բոլոր անդամները ու նրանց նախագահը պատերից բռնելով՝ մի կերպ հասան իրանց տները, ուր լաւ քնելուց յետոյ, իրիկնապահին միայն մի քիչ թեթևութիւն զգացին իրանց գլուխներում:

Տուն գնալիս տանուտէրը խստիւ պատուիրեց գզրին, որ նա հսկի գիւղի մաքրման, բայց գզիրը այնպիսի դրութեան մէջ էր, որ նոյն իսկ չը կարողացաւ պատերից բռնելով իր տունը հասնել. տանուտէրին տուն ճանապարհելուց նա անշնչացած դէակի պէս ընկաւ մի պատի առուերում ու խումփալով մընացաւ մինչև իրիկնամուտը:

Նոյն օրը, երբ գինին ու արաղը վերջնականապէս յաղթանակը տարան, բոլոր գիւղացիներն էլ գնացին իրանց գործին՝ որը հունձ գնաց, որը կալ կալսելու. ամառվայ սովորական աշխատանքը, հաղիւ մի օր կանգ առնելուց յետոյ, վերսկսվեց իր ամբողջ ծաւալով: Գիւղի մաքրման, աղբակոյտերի ոչնչացման մասին այլ ևս ոչ ոք չէր մտածում, ու այդպէս շարունակվեց գիւղի կեանքը: Արձանագրութիւններից ու տուգանքներից ազատվելու համար ամեն տան կանայք պատէր ստացան, որ առողջապահիկ յանձնաժողովը երևալուն պէս մի-մի աւել առնեն ձեռները ու սրբեն հայաթն ու մօտակայ փողոցը՝ ցոյց տալու համար, որ յանձնաժողովի կարգադրությունները ճշգրտութեամբ կատարվում են: Բայց այդ բաւական չէր. յանձնաժողովը դրանով ոչ մի դէպքում չէր բաւականանալ: Այդ քաջ գիտէին գիւղացիները, ուստի վաքիլների ու նրանց պետի սրտերը շահելու համար ամեն տան, նոյն իսկ ամենաաղքատ, որոշ չափով գինու ու արաղի պաշար կար պատրաստած. պատուիրած էր տնեցիներին, որ երբ յանձնաժողովը սաստիկ բարձրաձէնի ու սկսի արձանագրութիւն կազմել, այն ժամանակ ներս հրաւիրել նրան՝ «մի-մի բերան անցաւորաց օղորմի տալու» համար, մի կտոր հաց ուտելու, մի-մի բաժակ գինի կամ արաղ խմելու... «Աղջի,—ասում էր իր կնոջ արտը գնացող գիւղացին,—բան ա, ասվիլ չի, եթէ էսօր ոչ բարով էն գիլերը *), ուզբաշին ու խուլ ցաւի վաքիլները, գոն ու էս աղբերի մասին խօսան, դու մի էվիլ ձեռդ առ ու սրբի հայաթը. ինչքան խօսան, ուշունց տան, մեր մեռել-կենդանին էլ որ քաշեն, տազ արա, բան չի ծպտուս. ամա որ տեսնաս պրիտակոլ են շինում, շտըրաֆ են վճռում, կանչի տուն մի ճուղը քալամ ա, մի աման շուշան ա, ինչ ա, ըռեխները գցի ու մի-մի ստաքան գինի կամ արաղ տու, թող գլխներին զահրիմար անեն, կոըչեն: Եթէ տան արաղը հերիք չանի, գնա դուքանից մի բօթիլկա էլ բեր, միայն թէ մեզ վրա պրիտակոլ չանեն ու բանի էս թունգ վախտը ինձ գործից գցեն առն կրակ ընկածները...»

Ամեն օր վաքիլբաշին ժողովում էր իր վաքիլներին ու վաղ առաւօտեան սկսում իր արշաւանքը: Խմում էին նրանք առանց որ և է չափ սահմանի ու շատ սակաւ էր պատահում, որ առանց պատերից բռնելու գնան իրանց տները: Կէսօրից ոչ ուշ վերջանում էր նրանց «գործունէութիւնը». տաս-քսան հայաթ պտտելուց յետոյ նրանք անկարող էին լինում տների վրա կանգնել. յայտնի է, որ «զօրաւոր հեղուկը» հանաք անել չէ սիրում... Թէև որոշված էր, որ շաբաթը երեք անգամ միայն ման գան, բայց նրանք ամեն օր ման էին գալիս. ինչ էին կորցնում. լաւ ուտում էին, լաւ խմում, ևս առաւել խմում ու օրը մի-մի բուբլի հասարակութիւնից, ինչպէս ընդունված է այդ գիւղում, վաքիլավարձ ստանում. իրանց արտերի և կալ ու կուտի մասին բնաւ չէին մտածում. նրանց որդիները նրանց տեղ ամեն բան անում էին:

—Էս էլ լաւ բան ա է, էս տներ, հայաթներ թամուզ անիլ տալը. օղորմի սրա ադաթ դնողի հօրը. շիտակ քէֆ ենք անում,—ասաց մի անգամ լաւ կոնծելուց յետոյ Ծատուրը:

—Թամամ բարիկենդան ա, բարիկենդան մեզ համար,—ասաց Մարութը,—ով ղօչաղ ա, թող խմի, բօլ խմի. ամեն անգամ էսհէնց բան ճանկ չի ընկնիլ:

---

*) Գայլերը:

ՎԻԿՏՈՐ ՖՈՒՍԿՈՅԻ ԵՎ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ֆուսկոյի գրականությունը ինչպես ասվեց, ունի մի հատկություն, որ նրան դարձնում է ինքնուրույն գրական երեւույթ։ Ֆուսկոյի գրականությունը

Ի՞նչ եղաւ մեր վերաբերմունքը այդ հաժակրելի առաջարկի նկատմամբ. միայն ոգեւորութիւն։ Ի՞նչ արաւ սինօդը. արդեօք նա խնդիրը մասնագէտների քննութեան ենթարկեց. բազմակողմանի կերպով ուսումնասիրեց. ի հարկէ, դժբախտաբար, որ ոչ։

Ծանրակշիռ ասացինք այդ խնդիրը և շատ իրաւամբ, որովհետև նա մի շարք էական խնդիրներ է շօշափում։ Անցնենք մի քանի թուուցիկ ակնարկներ անելու։ 1. Այդ կանոնը բռնանում է մարդու ազատ կամքի վրա մի այնպիսի խնդրում, ուր, թւի թէ, նա ամենևին սրգելքի չէ կարող և չը պիտի ենթարկվի միայն այն պատճառով, որ նա հիւանդ է, որ նա կարող է վարակել իր ամուսնուն։ Կանոնի գլխաւոր նպատակը այն պիտի լինի, որ վարակումները պակասեն և ոչ այն, որ ամուսնալուծութեան նոր խնդիրներ չը ծագեն։ Արդ, եթէ մէկին չէ թոյլ տրվում ամուսնանալ, դրանով առհասարակ վարակման առաջն առնվում է. ի հարկէ ոչ։ Աւելին կասենք, եթէ այդ մէկը ամուսնալով պիտի վարակէր իր կնոջը, այդ իրաւունքից զրկվելով, նա կը վարակէ այն բոլոր կանանց, որոնց հետ նա կը լինի, որովհետև նա մարդ է, նա ցանկութիւններ ունի։ Ասել է կանոնը վարակման առաջը չէ կարող առնել։ Մարդկութեան կռիւը ուղղված պիտի լինի ախտի դէմ, ցաւի դէմ և ոչ ցաւագարների դէմ. կռիւը պիտի մղվի այն պատճառների դէմ, որից առաջ են գալիս ու կը գան վարակումները, և ոչ վարակման զոհերի դէմ, որոնք շատ անգամ դժբախտաբար պատահականութեան զոհեր են։ Այդ կռիւը հարկաւոր կը լինի մղել թերևս անառակութեան և անառականոցների դէմ, որովհետև վարակման և վնասակաս ախտերի ծաւալելու երկիւղը դրանցից է։

Բայց ինչու՞ են մարդիկ անառականոց գնում, երբ կարող են ամուսնանալ։ Այստեղ արդէն հանդէս է գալիս մի ծանր խնդիր—տնտեսական խնդիրը, որ անհնար է դարձնում երիտասարդների մի ստուար մեծամասնութեանը ամուսնանալ և վաղ 20—25 տարիքում պակվել։ Երբ կեանքը կը լուծէ այդ ծանր առեղծվածը—տնտեսական խնդիրը, երբ մարդկութիւնը կանգնած կը լինի քաղաքակրթութեան այն աստիճանի վրա, որ պարտաճանաչութեան զգացումը չի թոյլ տայ նրան հիւանդ ժամանակն ամուսնանալ և վարակել մի անմեղի և երբ մարդիկ աւելի շուտ կամուսնանան քան թէ տնտեսական պայմաններն այժմ են թոյլ տալիս, այն ժամանակ միայն վարակման երկիւղն ու սարսափը ինքն իրանց կանցնեն։

Քաղաքակիրթ մարդկութիւնը հնարաւոր չէ գտնում արգելքներ դնել վնասակաս հիւանդութիւնով վարակվածների ամուսնանալու դէմ. նրանց օրէնսդրութիւնը լուռ է այդ մասին. իսկ մենք, փոխանակ բուն չարիքի դէմ կռւելու, մեր զէնքը դարձնում ենք նրա հետևանքների դէմ. մենք բռնանում ենք նրան զոհ եղածների ազատ կամքի վրա։ Բայց ո՞վ է տուել մեզ այդ իրաւունքը. ո՞վ է արտօնել քննելու մարդու անհատական կեանքը, երբ նա մեր առաջ փակված է ու պիտի փակված մնայ անթափանց պատով. ո՞վ է իրաւունք տուել մեզ հրապարակի վրա դնել այդ կեանքը։ Մարդիկ, որ ոչ ամուսնանալ կարող են և ոչ էլ իրաւունք ունեն ամուսնանալու, թէկուզ նրանք ոգեորված լինեն ամենալաւ ցանկութիւններով, միթէ պիտի կարողանան բռնանալ ազատ մարդկանց ազատ կամքի վրա, ու պարտադիր անեն նրանց համար իրանց անկասկած բարի ցանկութիւնները։

Երկրորդ.—Մի բոպէ ենթադրենք, որ կեանքի մէջ ոչ մի դժգոհութիւն և դժուարութիւն չի առաջ գայ այդ կանոնի նկատմամբ։ Բայց ինչպէս վարվեն բժիշկները, որ բժշկական դիպլօմ ստանալիս հանդիսաւոր երդումն են տալիս չասել ուրիշին որ և է գաղտնիք իրանց դիմող հիւանդների մասին։ Միթէ որ և է բժիշկ առանց քրէական պատասխանատուութեան երկիւղի կարող է դրժել այդ երդումը։ Առանց նախապէս այդ երդմամբ յանձն առած պարտաւորութիւնը վերացնելու, ո՞ր բժիշկը իրաւունք ունի ուրիշի առաջ դրաւոր վկայել, թէ այս ինչ մարդը վեներական հիւանդութիւն ունի, մի բան, որ նրան յայտնի է խոստովանութեան պատճառով։ Պարզ է, որ նախ հարկաւոր է լուծել այդ արգելքը. բայց դա մեզնից—սինօդից է կախված։

Երրորդ.—Վեներական հիւանդութիւնների վարակման այնպիսի ժամանակ կայ, որ ոչ մի բժիշկ հիւանդութեան այդ ընթացքում իրան դիմող անձի վարածված լինելը չէ կարող ճանաչել. ուստի և ամեն մի բժիշկ ամենայն վստահութեամբ այդպիսի վարակման դիմաց գտնվող և իրան դիմող անձի համար կարող է վկայել, որ առողջ է նա։ Արդ, եթէ այդ անձը ամուսնանալուց անմիջապէս յետոյ վարակէ իր կնոջը, ի՞նչ անել այդ դէպքում. պատասխանատուութեան կանչել բժշկին, որ ոչինչով մեղաւոր չէ։ Կարող է պատահել, որ պակվող մի հիւանդ կուզարկէ բժշկի մօտ իր բարեկամ առողջ մէկին, ու իր անունով վկայական ձեռք կը բերէ ու կը պակվի, որից յետոյ վարակումն, դատ և այլն։ Այս և համանման դէպքերում առաջ կը գան, և այն անկասկած կերպով, սահմանված կանոնի դէմ գործված յանցանքներ. արդ, ո՞վ է այդ յանցագործներին պատասխանատուութեան ձգելու. ո՞ւմն է այդ իրաւունքը։ եկեղեցին ի՞նչպէս է վարվելու այդպիսի դէպքերում։ Մատածվի՞ է արդեօք այդ բոլորի մասին, ի հարկէ ոչ։

Անմիտ կը լինէր մտածել, որ հոգևոր իշխանութիւնը կարողանար այդ դէպքերում որ և է միջոցի դիմել, մի իրաւունք, որ նա չունի. յետո՞յ։ Բայց եթէ եկեղեցին իր սահմանած կանոնի դէմ եղած յանցագործներին չէ կարող որ և է պատասխանատուութեան ենթարկել, ու չէ էլ կարող դիմել պետական օրէնքների օգնութեանը, հապա նա ի՞նչպէս է կանոն սահմանում, ու ի՞նչպէս պիտի դուրս գայ առաջ գալիք դժուարութիւններից։

Արդեօք հարկաւո՞ր է ասել, որ առողջութեան վկայական ներկայացնելու դժուարութեան դէպքում, ամուսնացողներից մէկի բողոքականութիւն կամ կաթոլիկութիւն ընդունելով խնդիրն ինքն իրան լուծվում է։

Թողնենք առաջ բերած, ինչպէս և այլ մի շարք պատճառաբանութիւնները։

Ցոյս ունեմ, որ «Մշակի» յարգելի խմբագրութիւնը չի մերժի ներկայ յօդուածս հիւրընկալել, որ մի միտք ունի, մասնագէտների խնդիր դարձնել մեզ զբաղեցնող կանոնը, որի մասին ինքս անձամբ մի ընդարձակ յայտարարութեամբ դիմել եմ ազգիս Վեհափառ Հայրապետին։

Արսէն վարդապետ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԱՏՈՒԹԵԱՆ

—

Ստաւրոպոլ, դեկտեմբերի 18-ին

Էջմիածնի սինօդի վերին աստիճանի կաբեոր կարգադրութիւնը՝ ամուսնացող երիտասարդներից բժշկական վկայական պահանջելու մասին՝ անկասկած կուրախացնէ ամեն մի բանիմաց և սրտացաւ հայի։ Միայն շատ ցանկալի է, որ այդ կարգադրութիւնը, որքան հնարաւոր է, տարածվի բոլոր տեղերի հայերի վրա և որ մեր բժիշկներն ու քահանաները բարեխիղճ վերաբերվեն դէպի այդ կենսական հարցը և իրականապէս կատարեն գործնական կեանքում։

Այդ հաժակրելի կարգադրութեան առիթով պարտք ենք համարում սինօդի ուշադրութիւնը դարձնել ամուսնութեան հետ կապ ունեցող մի ուրիշ չարիքի վրա։ Դա «գլխագին», կամ «հա-դեմասի» անունով յայտնի տգեղ ու վայրենի սովորութիւնն է, որը տարածված է մանաւանդ մեր մի քանի գաւառներում։ Վայրենի ու բարբարոս ժամանակներից մնացած այդ սովորութեան մասին շատ է գրվել մամուլում. ուստի աւելորդ ենք համարում մանրամասնութեան մէջ մտնել։ Միայն այն կասենք, որ այդ սովորութեան համաձայն գիւղացի աղջկան, նշանելուց առաջ, դարձնում են ամենաթալի տակսրկութեան առարկայ և եթէ «ուրմիշ» են գալիս, փողով հատարեալ ծախում են, ամուսնութեան են տալիս, շատ անգամ աղջկայ կամքի հակառակ, ամենից շատ փող տուողին, այլ ոչ արժանաւորին, որին իրաւացի ցանկանում է աղջիկը, դրանից է, որ մեր գիւղերում տեղի են ունենում աղջիկ փախցնելու դէպքեր, ընտանեկան դժուարութիւններ, անհաւատարմութիւն, ապօրինի կենակցութիւն և այլն։ Նոյն իսկ գիւղացի ամուսնացած աղջիկը վճռում է փախչել իր սիրած տղի հետ։

«Գլխագինը» (կիսա լայրենի լեռնականների մէջ՝ «կալըմ», «բաշլըղ») վերացնելու փորձեր եղել են մեզանում։ Օրինակ, մի քանի տարի առաջ Ախալքալաքի գաւառի քահանաների և ժողովրդի նորկ սյացուցիչների ժողովը վճռեց վերացնել «հա-դեմասին» և առհասարակ նշանով քի ու հարսանիքի շուայլ ծախսերը։ Այդ նպատակով նոյն իսկ մի մանրամասն կանոնադրութիւն կազմվեց, որին հաւանութիւն էր տուել Վեհափառը և հրամայել էր իբր փորձ գործադրել։ Բաւական գործակալը և ուրիշ տեղերից ցանկացան հետևել Ախալքալաքի օրինակին։ Բայց հիմա լսում եմ, որ Ախալքալաքի գաւառում աղղեցիկ աղջկատերերի շնորհիւ և ղեկավար անձնաւորութիւնների բացակայութեան պատճառով վերսկսնվում են «հա-դեմասին» իր նախնական փայլով։

Այդ պատճառով շատ ցանկալի է, որ սինօդը մասնաւոր փորձերին սանկցիա տայ և մի ընդհանուր կարգադրութիւնով ընդմիշտ և ամեն տեղ վերացնէ այդ ստորացուցիչ և կուլտուրականութեան յաւակնութիւն ունեցող ժողովրդի համար անպատուաբեր սովորութիւնը, որով ընտանեկան շատ տխուր երեւոյթների առաջը կառնվի։ Հարցը հասունացած է, և այդպիսի կարգադրութիւնը անպայման աջողութիւն կունենայ։

Ցանկալի է, որ Ախալցխայի նախկին յաջորդ և ներկայումս սինօդի անդամ Բարգէն վ. Աղաւելեանը, որը լաւ ծանօթ պիտի լինի «հա-դեմասու», սրա վատ հետևանքների և այդ չարիքի դէմ Ախալքալաքում արած փորձերի հետ,—նախաձեռնութիւն յանձն առնէ և այդ հարցը սինօդի քննութեան առարկայ դարձնէ։

Սալլիմեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը նիւթի շատութեան պատճառով բաղկացած է $1^1/_2$ թերթից։

—

Էջմիածնի Սինօդը մի համակրելի կարգադրութիւն է արել։ Նա որոշել է նշանակել իր անդամներին իր իրաւասութեան տակ եղած թեմերի վրա վերաքննիչ։ Այդ կարգադրութիւնն արդէն սկսվել է գործադրութեան դրվել. Մատթէոս վարդապետն ուղարկված է Երևանի թեմը քննութեան, իսկ Բարկէն վարդապետը Շամախու թեմը։

—

«Հ. Օ.»-ին հեռագրում են Գանձակից դեկտեմբերի 27-ին. «Երէկ թաւուզ կայարանում սպանեցին կայարանի գլխաւոր Դոլիցկուն։ Զարագործը փախաւ»։

—

Անցեալ օրը, դեկտեմբերի 27-ին Թիֆլիսի երդռնեալ հաւատարմատարներն ընդհանուր ժողով էին արել նահանգական դատարանի շէնքում։ Ժողովի առարկան էր երդուեալ հաւատարմատարների խորհուրդ հիմնելու խնդիրը Թիֆլիսում։ Ժողովը գտնելով, որ այդ հիմնարկութիւնն անհրաժեշտ է Թիֆլիսում, ընտրեց Ս. Վ. Զեմեսով, Ս. Ս. Մելիք-Աղամեան և Պ. Ա. ՕպՀչինին երդուեալ-հաւատարմատարներին և յանձնեց, որ մանրամասն ծրագիր մշակեն և, ամենաուշը 1905 թւի յունվարի 7-ից ոչ ուշ, ներկայացնեն քննութեան։ Այդ յանձնաժողովին տրված է միայն հետևեալ սկզբունքը. խորհրդի հիմնարկութիւնը լինելու է այնպիսի կանոնադրութիւնով, որի մէջ չը մտցվի ոչ մի կրօնական կամ ցեղական տարբերութիւն անդամների ու մասնակցողների վերաբերութեամբ։

—

Ստացանք Գ. Արաքսեանի «Միւրպրիզ» վոդեվիլ 1 գործողութեամբ։ Գրքոյկը բաղկացած է 25 երեսից և արժէ 20 կոպէկ։

—

ԳԲՆԱՏՈՒՐԻ

—

—Ատա՛ քո աղբաթի խէր ըլի, էդ ի՞նչ ես ասում, ի՞նչ,—դարձաւ նրան Ծատուրը,—Մակին օխտը գբնատուրի խելք ունի, օխտը գբնատուրի։

—Մին էլ Զաւադ-խանին ա դրա չափ խելք ըլել,—ասաց Գիւլունց Քիքին։

—Մեր գեղումը Մակի պէս ազդեցութիւն անող մարդ չի կայ,—ասաց Աւագիմը։

—Ը՛հ, ես Մակի արևին մատաղ, ես,—ասաց Մարութը,—դա մեր գեղի համար հատ գբնատուր ա, հատ խան։

Տանուտէր Աղասին կրկին ու կրկին անգամ համբուրվեց տան շէմքում Մակի հետ ու ասաց խորին ոգևորութեամբ.

—Ա՛ Մակ, էստեղից չուայ Պետերբուրգ, էստեղից չուայ Պետերբուրգ ես իմ իշխաններով քեզանից շնորհակալ եմ, ա՛ Մակ։ Քեզ ու քո օջախը Աստուած մեր գեղի համար հաստատ պահի, միշտ հաստատ։

—Ես էլ էստեղից չուայ Երուսաղէմ եմ քեզանից ու քո իշխաններից շնորհակալ, ուզբաշի,—ասաց խիստ զգացված տանուտէրական արտաքոյ կարգի շնորհակալութիւնից Մակին,—տունը խմբ չի, քոնն ա, քոնը. գեղի մեծը, գեղի տէրն ես դու. ամեն օր քո իշխաններով եկ, կեր, խմի՛ Աստծու տածից, քէֆ արա՛...

Մակիի ծառաներից երկուսը բռնեցին տանուտէրի կռնեներից ու տարան նրան իր տուն։ Գիլիը փորձեց նրանց օգնել, բայց հազիւ երկու քայլ արած, վայր ընկաւ անզգայ. նշանաւոր կենացները նա ամբողջ շշերով էր խըմել։ Վաքիլներն ու միւս հիւրերը պատերից բռնելով անյայտացան գիշերային մթութեան մէջ...

(Վերջ)

Ստ. Տէր-Աւետիքեան

—Վայ մեզ, վայ մեր հոգուն. հասարակի օգտի համար մենք նրան մեր ուշունցներով դժոխքի բաժին ենք դարձնում,—ասաց վաքիլ Հանէս ամին։

—Ո՞նց ասեմ. շարթիս էնքան մեռել-կենդան ենք քաշել, էնքան մեծի ու փոքրի ուշունց տուել, որ պէտք ա էստեղից ոտով Երուսաղէմ գնանք, բալքի կարողանանք մեղքերի տակից դուրս գալ,—ասաց Մարութը,—ի՞նչ շահ ունենք մենք, ո՞ւմ օգտի համար ենք ուշունց տալիս ու մեր հոգին մեղքի տակ դցում։

—Ո՞նց թա ում օգտի համար,—ասաց զարմացած Ծատուրը,—հասարակութեան օգտի համար ենք ուշունց տալի, գեղի, ժողովրդի համար ենք ուշունց տալի, խուլ ցաւի ըռեխը ետ տալու համար ենք ուշունց տալի։

—Քանի-քանի անգամի ենք եկել հէնց էստեղ քո հայաթն, ա՛ Մակ, որ թամուզ անել տանք. խմացիր, որ խաթրդ շատ մեծ ա մեզ մօտ, քեզ շատ պատիւ ենք արել, որ մինչև հիմի պրիտակոլ չենք արել քեզ վրա. եթէ քո տեղ մի հասարակ ռահաթ մարդ ըլէր ու նրա հայաթում էսքան ա զրեր, նրա վրա հիմի տասը պրիտակոլ էինք շինել ու տասն անգամ էլ կարկաժը թակել,—ասաց վաքիլբաշի Աղասին։

Խօսողները յաճախակի նայում էին քեռթվող ոչխարին։ Մակին խօսակցութեան հէնց սկզբում նկատեց այդ ու իսկոյն հասկացաւ նրանց փորացաւը։

—Լաւ, լաւ, պրիտակոլը յետոյ կը շինէք,—ասաց նա,—եկէք գնանք տուն մի երկու թիքայ մատաղի խորոված ուտենք. այ տղայ, Ղազար,—դարձաւ Մակին ծառաներից մինին,—ոչխարի ջգարը, պլոճիկներն ու թոքերը խորովի. շուտ, կ՝նոխ արա՛։

—Ա՛ Մակ, քեզ մատաղ, բա էսօր մենք բան շատ ունենք,—ասաց տանուտէրը,—վախում եմ մեզ շատ պահես ու բանից զցես. էսօր տուդը նստիլ պիտի. գործեր շատ կան քննադատելի։

—Վախիլ մի, գցիլ չեմ, ոտի վրա ձեռաց մի-մի թիքայ խորոված կերէք ու մի-մի թաս գինի խմեցէք ու գնացէք,—ասաց Մակին։

Աղասին ուզեց մի քիչ էլ նազ անել, բայց պաշտօնակիցները բողոքեցին ու ուղղեցին իրանց քայլերը Մակիի ետևից. տանուտէրը հետևեց նրանց օրինակին։

Մի մի թիքայ խորոված դարձաւ կարգին նախաճաշիկ, նախաճաշիկը ճաշ, իսկ ճաշը քէֆ, որը տևեց ամբողջ օրն ու երեկոն։ Երբ գործը լուրջ կերպարանք ստացաւ, Մակին ուղարկեց իր մտերիմ Աւագիմի ու գիւղի միւս իշխանների ու ազդեցիկների ետևից։ Դատարանի նիստը յետաձգվեց. բոլոր դատաւորները, որոնց թւում էին Ծատուրն ու Մարութը, Մակիի տանն էին։ Գործ ունեցող գիւղացիներից մի քանիսը փորձեցին բողոքել. նրանք եկան Մակիի տունը, որ խնդրեն տանուտէրին՝ չը յետաձգել նիստը. ամբողջ ամիսներով նրանք սպասում էին իրանց գործերի քննադատութեան, բայց արբած գլիրը, որը կանգնած էր տան դռան, սպառնալով մարակով ու հայհոյելով, խրկեց նրանց ասելով՝ «Շունչան որդիք, կոլէք, ռադ ըլէք. էսօր ուղբաշին իր իշխաններով ու մեծամեծներով քէֆ ա անում. զահլայ մի՛ք տանիր, գնացէ՛ք. հրաման չի կայ»։

Երբ հիւրերի կառարները չափից դուրս տաքացան, Մակին ուղարկեց դաւաների ետևից։ Այդպիսի քէֆեր նա երբեմնակի սարքում է. նրանց շնորհով է նա իր ազդեցութիւնը զօրեղացնում գիւղում. նրանց շնորհով է նա իշխում գիւղում, իբրև նրա միահեծան իշխանենթարկում իրան ոչ միայն հասարակ գիւղական ամբոխին, այլ և գիւղի իշխանաւորներին, որոնց ձեռքին է ամբոխի ղեկը։ Մինչև աքաղաղների կանչելը զուռնա-զուռալը ածում էր Մակիի տանը։ Հիւրերը ուտում էին ու խմում, խմում անխնայ ու անվերջ և գովում, մեծարում էին Մակիին. խօսում էին իրանց գործունէութեան մասին «օգուտ հասարակաց», տաք-տաք վիճաբանում էին ու պարում։ Թամադան Աւագիմն էր. ամեն մի կենաց առաջարկելուց յետոյ նա ստիպում էր սեղանակիցներից մէկին կամ միւսին պարել ի պատիւ այն անձնաւորութեան, որի կենացը խըմվում էր։ Երբ քէֆը հասաւ իր գագաթնակէտին, Աւագիմը կանգնեց տեղից, հրամայեց զաւաներին լռել ու մեծ խորհրդաւորութեամբ, մի կարճ, բայց ազդու ճառով առաջարկեց բարձր իշխանութեան կենացը. բոլորն էլ յոսնկայս խմեցին։ Տանուտէր Աղասին առանց Թամադայի առաջարկութեան հասկացաւ իր անելիքը, ամայեց զաւաներին ածել «քեսխվի հաւայ», տանուտէրական կոչման վայել մի եղանակ, զաւալական բեպերտուարի բազմաթիւ եղանակներից ամենազիլն ու ամենախրոխտը, ու մէջ ընկաւ պարելու. վաքիլբաշին ու տանուտէրը պարեց, շատ երկար պարեց ի պատիւ բարձր իշխանութեան... Պարելիս երբեմնակի դարձնում էր նա երեսը զաւաներին ու բարձրաձայն աղաղակում նրանցից առաջինի հասցէին։

—Ղաւալ Աւագ, լաւ փչի՛, Ղաւալ Աւագ. Ջահելութիւնդ միտդ գցի՛. բարձր իշխանութեան պատուի համար ա էս պարը...

Կէս գիշերը վաղուց էր անցել, երբ հիւրերը ցրվեցին։

Ցրվելիս տանուտէրը, վաքիլներն ու իշխանները գրկախառնվում էին Մակիի հետ, տաք-տաք համբուրվում ու գովում, անչափ գովում նրան։

—Ես քեզ մատաղ, ա՛ Մակ,—ասաց տանուտէրը,—ես չուայ հիմի գիտացել եմ, թէ դու մի նաչալնիկի խելք ունես. չէ՛, սխալ եմ ըլել, շատ սխալ. ներողութիւն արա՛, բաշխի. դու Թամամ մի գբնատուրի խելք ունես, մի գբնատուրի։

—Ատա՛ քո աղբաթի խէր ըլի, էդ ի՞նչ ես ասում, ի՞նչ,—դարձաւ նրան Ծատուրը,—Մակին օխտը գբնատուրի խելք ունի, օխտը գբնատուրի։

—Մին էլ Զաւադ-խանին ա դրա չափ խելք ըլել,—ասաց Գիւլունց Քիքին։

—Մեր գեղումը Մակի պէս ազդեցութիւն անող մարդ չի կայ,—ասաց Աւագիմը։

—Ը՛հ, ես Մակի արևին մատաղ, ես,—ասաց Մարութը,—դա մեր գեղի համար հատ գբնատուր ա, հատ խան։

Տանուտէր Աղասին կրկին ու կրկին անգամ համբուրվեց տան շէմքում Մակի հետ ու ասաց խորին ոգևորութեամբ.

—Ա՛ Մակ, էստեղից չուայ Պետերբուրգ, էստեղից չուայ Պետերբուրգ ես իմ իշխաններով քեզանից շնորհակալ եմ, ա՛ Մակ։ Քեզ ու քո օջախը Աստուած մեր գեղի համար հաստատ պահի, միշտ հաստատ։

—Ես էլ էստեղից չուայ Երուսաղէմ եմ քեզանից ու քո իշխաններից շնորհակալ, ուզբաշի,—ասաց խիստ զգացված տանուտէրական արտաքոյ կարգի շնորհակալութիւնից Մակին,—տունը խմբ չի, քոնն ա, քոնը. գեղի մեծը, գեղի տէրն ես դու. ամեն օր քո իշխաններով եկ, կեր, խմի՛ Աստծու տածից, քէֆ արա՛...

Մակիի ծառաներից երկուսը բռնեցին տանուտէրի կռնեներից ու տարան նրան իր տուն։ Գիլիը փորձեց նրանց օգնել, բայց հազիւ երկու քայլ արած, վայր ընկաւ անզգայ. նշանաւոր կենացները նա ամբողջ շշերով էր խըմել։ Վաքիլներն ու միւս հիւրերը պատերից բռնելով անյայտացան գիշերային մթութեան մէջ...

(Վերջ)

Ստ. Տէր-Աւետիքեան

Ստացանք Պարիզում հրատարակվող «La Revue des Idées» ամսագրի դեկտեմբերի 15-ի համարը, որի մէջ կան հետևեալ յօդուածները. «La Transformation des études sanscrites»—«Սանսկրիտերէնի կրած փոփոխութիւնները»—Սիլվէն Լէվիի, «Le Problème du déterminisme sexuel»—Սեռական դետերմինիզմի խնդիրը—Գիւստաւ Լուազէլի, «Des Mythes historiques» «Պատմական միֆերը»—յօդուած Պօլ Լաֆարգի, և L'Application des mathématiques aux sciences sociales—«Մաթեմատիկայի գործադրութիւնը հասարակական գիտութիւններում» Քրիստիան Կօրնէլիսսէնի։

—

Ֆրանսիական հիւպատոսարանը դիմել է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեանը և խնդրել մանրամասն տեղեկութիւններ Անդրկովկասում գտնվող այծերի տեսակի և նրանց արդիւնաբերութեան մասին։

—

Այս տարի Թիֆլիսում մի տարօրինակ ձմեռ է անում։ Ամսից աւելի է, որ եղանակը պարզ է և արեգակը զգալի կերպով տաքացնում է օդը ցերեկվայ ընթացքում։ Քաղաքի շրջակայքում ձիւն չը կայ։

—

Այսօր, չորեքշաբթի, դեկտեմբերի 29 ին, Վէյցելի հիւրանոցի թատրոնական բեմի վրա սիրողները կը ներկայացնեն «Խուզարկու» պիէսը։ Ներկայացման մասնակցում է հին սիրող Յովհաննէս Տէր-Գրիգորեան։

—

Բագուից հաղորդում են «Бирж. Вѣд.»-ին, որ նաւթարդիւնաբերողների մէջ նկատվում է շփոթութիւն բանւորների գործադուլի առիթով։ Եթէ թիւրիմացութիւնները չը հարթվեն, շատ պայմաններ և առ ու ծախեր պէտք է քանդվեն. տուգանքներն սկսում են արդէն սպառնալ պայմանները ճշտութեամբ չը կատարողներին։ Նոր պայմաններ և առ ու ծախեր առանձին ախորժակով չեն կնքում և միշտ աչքի առաջ են ունենում պայմանների մէջ դնել չը նախատեսված պարագաները։

—

«Русь» լրագրում տպված է. «Յենդուրայի և մաժուլի օրէնսդրութեան 138-դ յօդուածի հիման վրա, ամենախոնարհաբար խնդրում եմ «Русь» լրագրի խմբագրութեանը տպել իր լրագրի առաջիկայ համարում, որ «Русь»-ի 369-դ համարի խրօնիկայի բաժնում կիրակի, դեկտեմբերի 19-ին զետեղված լուրը մինիստրների կոմիտէի դեկտեմբերի 14-ի նիստում եղած խորհրդածութիւնների մասին ամենևին չէ համապատասխանում այդ նիստում տեղի ունեցածներին։ Կոմիտէի գործավար պետական քարտուղար բարօն Նօլդէ»։

—

Մօսկվայի նահանգական զեմստվօի փակումից յետոյ՝ նրա նախագահը, նահանգական ազնուականութեան պարագլուխ իշխան Տրուբեցկոյը դիմել է ներքին գործերի մինիստր իշխան Սվեատոպոլկ-Միրսկուն մի նամակով, որով մանրամասն պարզում է թէ ինչու կառավարական հաղորդագրութիւնը վրդովեց ձայնաւորներին, ինչպէս զեմստվօի գործիչների, որոնք մոտից և լաւ ճանաչում են երկրում եղած իրերի վիճակը և հասարակական լայն խաւերի տրամադրութիւնները։

—

Պետերբուրգից անցեալ երկուշաբթի օրը մեկնեցին Տամբովի նահանգական զեմստվօի վարչութեան նախկին նախագահ Կոլօբակը և գաւառական ազնուականութեան պարագլուխ Պետրովո-Սոլովովօն։ «Русь»-ը լսել է, որ նը նրանք Պետերբուրգ էին եկել անցեալները Տամբովում զեմստվօի շինութեան շուրջը ծագած անկարգութեան գործի պատճառով։ Դեկտեմբերի 20-ի առաւօտեան նրանք ներկայացել են ներքին գործերի մինիստրին։

—

Լրագիրները լսել են, որ իրաւաբանների համառուսական դաշնակցութիւն կազմելու հարցը քննութեան է տրվելու առաջիկայ յունվարի 3 և 5-ին Կիեվում կազմվելիք կրիմինալիստների միջազգային դաշնակցութեան ռուսական խմբի 5-դ ընդհանուր ժողովին։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մի հետաքրքիր, բայց և միաժամանակ մի տխուր դատ է յանձնել Պետերբուրգի դպրոցական շրջանի հոգաբարձու կամէրհէր Իզվօլսկուն։ Կայսերական Մարդասիրական Ընկերութեան գիմնազիայում ծեծել են մի աշակերտի։ Կամէրհէր Իզվօլսկուն յանձնված է այդ գործը հնար եղածին չափ շուտով քննել և քննութեան արդիւնքը, ասում է «Наши Дни» լրագիրը, յայտնել իսկոյն մինիստրութեանը։

—

«Нов. Вр.» լրագիրը ստացել է անհերքելի տեղեկութիւններ, որ Մուկդէն ուղարկված բոլոր բեռները տեղ չեն հասնում, իսկ որոնք էլ որ հասնում են, կրում են իրանց վրա ուրիշի ձեռքերի հետքերը։ Իրերով լցված զամբիւղները դատարկ են լինում կամ ցախերով ու այլ «զիբիլով» լի։ Պետերբուրգից ուղարկված 100 արկղի փոխարէն՝ երկար որոնումներից յետոյ՝ հազիւ 12 հատն են գտնում և այլն։

—

Պետերբուրգի համալսարանի ռեկտորի առաջարկութեամբ՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրը կարգադրել է, որ այսուհետև Պետերբուրգի համալսարանում եղած 25 գիտական ընկերութիւնները այլ ևս դռնբաց նիստեր չունենան։ «Наши Дни» նոր լրագիրը լսել է, որ այդպիսի կարգադրութեան պատճառը եղել է նոյեմբերի 14-ին փիլիսոփայական ընկերութեան նիստի ժամանակ տեղի ունեցած թիւրիմացութիւնը։ Մինիստրութիւնը դրանով յոյս ունի արգելել զանազան բարձրագոյն դպրոցների ուսանողների համախմբումը համալսարանում։ Միայն, ի հարկէ, այդ կարգադրութիւնը չէ վերաբերում հրապարակային դասախօսութիւն պաշտպանելու հարցին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐԻ ԱՆԿՈՒՄԸ

Եւրոպական եւ ռուսաց մամուլի կարծիքը Պորտ-Արտուրի անկման մասին։ «Times» լրագիրը իր առաջնորդող յօդուածում գրում է։ Բորսան փակված է և այդ պատճառով յայտնի չէ դեռ, թէ ինչ տպաւորութիւն կը գործէ Պորտ-Արտուրի անկումը բորսայի ընդհանուր տրամադրութեան վրա, և մանաւանդ ռուսաց արժեթղթերի գների վրա։ Սակայն ֆինանսական շրջաններում կարծում են, որ վերջնական տպաւորութիւնը բորսայի վրա ճնշող չի լինի, որովհետև դրա հետ միասին յոյս տարածվեց, թէ հնարաւոր կը դառնայ բանակցութիւններ սկսել խաղաղութեան մասին։ Այդ առիթով «Standard» յայտնում է լաւ աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, որ թէպէտև միջնորդութեան վերաբերեալ հարցը դեռ ևս չէ կարելի հերթական դարձնել, բայց այնուամենայնիւ պէտք է ասել, որ Պորտ-Արտուրի անկումով վերացված է խաղաղութեան լուրջ արգելքներից մէկը, որովհետև եապօնացիները այժմ աւելի հակամիտ են խաղաղութիւն կապելու, իսկ Չինաստանը դիտաւորութիւն չունի որ և է պահանջ յայտնելու Պորտ-Արտուրի վերաբերմամբ։ «Standard» աւելացնում է, որ խաղաղութեան դաշն կապելու հնարաւորութեան համար Անգլիան կարող էր հրաժարվել Վէյհայվէյից, որը գրաւել է Անգլիան ռուսների կողմից Պորտ-Արտուրը գրաւելու պատճառով։ (Բ. Բ.)

Մի այլ յօդուածում «Times» լրագիրն ասում է. «Պատերազմական տեսակէտից Նոգիի աջողութեան անմիջական հետևանքը առանձնապէս լուրջ չէ կարող լինել։ Նա կազատել, երևի, 50,000 ընտելացած զօրք Շախէի վրա գտնվող բանակը ուժեղացնելու համար, բայց դա քիչ կը փոխէ դրութիւնը։ «Times» արդարացնում է եապօնացիների տակտիկան Պորտ-Արտուրի վերաբերմամբ»։ Լրագիրն ասում է. «Նա ոչ միայն բերդ է, նա խորհրդանշան է (սիմվոլ), իսկ Արևելքում նշանաբանները այնպիսի նշանակութիւն ունեն, որ երբէք հասկանալի չեն կարող լինել արևմտեան քաղաքական գործիչներին։ Պորտ-Արտուրը վերցնելով, եապօնացիները ջնջում են դառն յիշողութիւն անարդար պարտութեան մասին և հանում են իրանց վրա դրված արատը, այն է իրանց հետ վարվողութիւնը, որպէս մի ինչն արևելեան պետութեան հետ, որին մերժում է ընդունել իր շրջանում մեծամիտ Արևմուտքը։ Նրանք անում են աւելի ևս,—ոչնչացնում են Ռուսաստանի զօրութեան և գերազանցութեան նշանաբանը Հեռաւոր Արևելքում։ Խորտակելով խաղաղ ովկիանական նաւատորմը, եապօնացիները կարող են ազատ կերպով հանդիպել բալտիական էսկադրային, եթէ նա կը համարձակվի մտնել Հեռաւոր Արևելքի ջրերը։ Նրանք խորտակեցին ռուսների պրէստիժը Մանջուրիայում և ամբողջ Չինական կայսրութեան մէջ։ Դրանք մեծ հետևանքներ են հասցրել պատերազմի համար և նրա՛ջ կարող են ահագին ազդեցութիւն գործել Ռուսաստանի ընդհանուր դրութեան վրա։ Ինչ վերաբերում է Ռուսաստանին, նրա մասին հաստատապէս խօսել դժուար է, որովհետև նա նման չէ ուրիշ եւրոպական պետութիւններին, և մենք կարող ենք միայն սպասել, թէ ինչ կը ցոյց տան հանգամանքները։ (Բ. Ա.)

«Новое Время» լրագիրը գրում է. «Պորտ-Արտուրն ընկաւ։ Միլիոնաւոր բերաններ կը կրկնեն այդ կսկծալի—ծանր լուրը։ Պաշտպանութիւնը ջարդվեց. պաշտպաններ մնացել էին մի բուռն մարդիկ—5000 հոգի, իսկ թնդանօթներ ամենևին չը կային։ Այժի բարձր բեռն էր ընկել մեր հերոսների մէջքին։ Նրանց վիճակված էր դիմադրել 100,000-անոց զօրքի սոսկալի գրոհման և կատաղի յարձակումներին, զօրքի, որ շարունակ թարմանում էր նոր ոյժերով։ Մեր քաջարի հերոսները ստիպված էին վերջին ժամանակներս կռուել միայն սուրներով եապօնական մահաբեր կրակի դէմ։ Կռիւը չափազանց անհաւասար էր»։

Մի այլ տեղ նոյն լրագիրը ասում է.

«Այսօր, Պետերբուրգում, ամենքի շրթունքների վրա մի խօսք միայն կայ «Պորտ-Արտուր»։ Բերդի անձնատուր լինելու լուրը դեռ նախորդ օրը երեկոյեան տարածվել էր ամբողջ քաղաքում։ Լրագիրները, հեռագիրները և երեկոյեան յաւելուածները ձեռքից ձեռք խլվում էին փողոցում. այդպիսի տրամադրութիւն միայն եապօնացիների Պորտ-Արտուրի վրա յանկարծակի յարձակման և «Պետրոպաւլովսկի» ու Մակարովի կորստեան ժամանակն էր»։

Մի երրորդ տեղ ասված է.

«Պորտ-Արտուրը ընկաւ հերոսական պաշտպանութիւնից յետոյ ութ ամսվայ ընթացքում։ Եթէ կարելի է մի բանով մխիթարվել այդ մեծ վշտի մէջ, դուցէ նրանով, որ եապօնացիները առանձին տրօֆէներ չը ստացան. ամրոցների մեծ մասը պայթեցրված է, պայթեցրված են նաւահանգստում գտնվող գրեթէ բոլոր մեծ նաւերը, իսկ ականանաւերը կարողացան դուրս գալ Արտուրից»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Ֆրանսիական լրագրի կարծիքը ռուսաց էսկադրայի մասին։ «Temps» լրագրի աշխատակից Բերնէն, խօսելով նաւատորմիների գործունէութեան մասին Խաղաղ Ովկիանոսում և շեշտելով այն հանգամանքը, թէ հէնց սկզբից ռուսաց առաջին Խաղաղ-ովկիանոսեան էսկադրան շատ թոյլ էր, նկատում է. «Այդ էսկադրայի ծովային պաշտպանութիւնը, դուցէ, աւելի հեռու չէր գնում Պորտ-Արտուրի նաւահանգստի վրա տիրող փարոսի տեսակէտի ճառագայթներից։ Սակայն այդ պաշտպանութեան հետևանքները մեծ էին ցամաքի վրա տեղի ունեցած դէպքերի համար։ Եթէ հնարաւոր եղաւ զօրքերը կենտրոնացնել Լեաօնանում, եթէ Մուկդէնը պահված է մինչև այսօր, դա պէտք է վերագրել այն սակաւաթիւ նաւերի ծառայութեան, որոնք այժմ հանգչում են արևելեան աւազանի յատակում։ (Պ. Բ.)

Եապօնիայի մի նոր ծրագիրը։ «Journal des Débats» լրագիրը, Շանգհայի մի չինական լրագրի խօսքով հաղորդում է, որ եապօնական մի դիպլոմատ հետևեալ յայտարարութիւնն է արել. «Մեր կառավարութիւնը ցանկանում է ճանաչել իբրև մի անկախ պետութիւն մանջուրական երեք նահանգները. Չինաց արքունիքը կարող է կայսերական տան մի որ և է պրինց առաջարկել իբրև այդ նոր պետութեան թագաւոր, որ կը լինի Եապոնիայի հովանաւորութեան ներքոյ։ Այդպիսով, Չինաստանի օրինական իրաւունքները կը պահպանվեն, Եւրոպայի անվստահութեան առաջը կառնվի և Ռուսաստանի միջամտութեան վերջ կը դնվի։ (Հ.)

Եապօնական լրագիրները նոր տարվայ օրը։ Նոր տարվայ օրը (ն. տ.) Տօկիօում լոյս տեսած լրագիրները պնդում են, որ անհրաժեշտ է մղել պատերազմը աւելի մեծ յամառութեամբ և անխոնջ եռանդով, որովհետև, ասում են նրանք, պատերազմը նպաստեց եապօնացիների միացման։ (С-пб.)

Եապօնական պարլամենտի արագութիւնը։ «Times» լրագրին հեռագրում են Տօկիօից, որ դեկտեմբերի 15-ին եապօնական պարլամենտի վերին պալատը միաձայն տուեց կառավարչական բոլոր ֆինանսական ծրագիրներին այն ձևով, ինչպէս նրանք յանձնվել էին իրան Ներքին պալատից։ Կարևոր հարցերի այդպիսի շուտափոյթ քննութիւնը—ասում է Թղթակիցը—անօրինակ բան է եապօնական պարլամենտի տարեգրութիւնների մէջ։ Առաջին մինիստր կոմս Կացուրան շնորհակալութիւն յայտնեց պարլամենտին և յայտնեց թէ երբ բոլոր զինուորները իմանան պարլամենտի գործողութեան հայրենասիրական եղանակի մասին, նրանք կը կրկնապատկեն իրանց ջանքերը դրված նպատակի իրագործման համար։ Պարլամենտը բուէարկեց ուղերձ ի պատիւ ծովապետ Տոգօի, որի մէջ գովաբանվում է նրա ռազմագիտական ընդունակութիւնը և ասված է, թէ շնորհիւ նրա իմաստութեան կսրելի եղաւ ոչնչացնել թշնամու նաւատորմը։ (Нов.)

Բալտիական էսկադրայի վերադարձելու լուրը։ «Standart» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է, որ Պետերբուրգի ծովային շրջաններում աւելի և աւելի ոյժ է ստանում գեներալ Բոժէստվէնսկու էսկադրան յետ կանչելու միտքը, որովհետև հաւատացած չեն այն բանում, որ նա կարող է յաղթութիւն տանել։ Կամ բալտիական էսկադրան պէտք է սպասէ երրորդի գալստեան, կամ պէտք է վերադարձվի։ (Тфл.)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՑ

Մարաղա, դեկտեմբերի 15-ին

Ահա 7 ամսից աւել է, որ խօլերան ամբողջ Պարսկաստանում ահագին զոհեր է տանում. 100,000-ներ են հաշուում մեռնողների թիւը։ Մեծ յոյսերով սպասում էինք ցրտերին, որ փախցնէր այդ անկոչ հիւրին, բայց դժբաղդաբար այդ էլ կարծես չէ ուզում իրագործվել։ Ինչպէս պատերազմող կողմերը ձրմեռվայ զինադադար են անում, պատրաստվելով գարնան աւելի ահռելի կռիւների—կոտորածների, այդպէս էլ այս տարվայ խօլերան է, որ արդէն բաւական տեղեր նուաճելով, (բուն դնելով), երբեմն այս ու այնտեղ ցոյց է տալիս իրան, որ բոլորովին չէ վերացել, այլ ցրտից պատսպարվելով պատրաստվում է գարնան նորից պակասը լրացնելու։ Մարաղայում խօլերայից մեռնողների թիւը 2000-ից աւելի էին հաշուում. Մարաղայում պատրաստ են գարնան պակասորդը տալու, որովհետև առանց խօլերայի էլ զոհերի թիւը շատ է։

Այս տարի սարդի բերքը սկզբում սովորականից պակաս էր, բայց եղածի կէսից աւելին էլ անձրևները փչացրին։ Լաւ ապրանքի արժէքը չափազանց թանգ է, անձրև կպածը, որ առհասարակ հաւաքում են պարսիկ վաճառականները բոլորովին սև և փչացած ու էժան է. հացն էլ պակաս լինելով՝ գինը բարձր է, բայց լաւութիւնն այս է, որ Մարաղան չէ նմանում Պարսկաստանի մի քանի ուրիշ քաղաքների, միշտ մաքուր և նոր հաց կարելի է գտնել ամեն օր։

Մ-ի—Աշոտ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքիա. «Frankf. Zeitung» լրագրի կ. Պոլսից ստացած տեղեկութիւնների համաձայն, լորդ Լանսդաունը առաջարկեց Լոնդոնի Թիւրքաց դեսպան Մուսուրուս փաշային տեղեկացնել սուլթանին, որ եթէ նա չի հաստատի ամենակարճ միջոցում Ադէնի միւս կողմում գտնվող երկրների մասին կայացած համաձայնութիւնը, ծանր հետևանքներ կունենայ Թիւրքիայի համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրը Նորին Կայսերա՛ն Մեծութեան Անունով, դեկտեմբերի 26 ից. «Դեկտեմբերի 23 ին աջ թևի վրա, Սայնտայցզի գիւղի մօտ, Չժանուանից 12 վերստ հարաւարևմուտք, մեր գաղտնի պահակը, յանկարծակի յարձակվելով եապօնական սայլախումբի վրա, ուղեկցող զինուորների հետ հրացանաձգութեան բռնվելով, սայլերի մի մասը խլեց և գերի առաւ մի վիրաւոր եապօնացու։ Վերոյիշեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան»։

ՄՈՒԿԴԷՆ, 26 դեկտեմբերի։ (Սեփ. Թղթ.)։ Չիֆուում հիմնված է եապօնացիներից խմբագրվող մի շաբաթաթերթ եապօնական ազդեցութիւնը Չինաստանում տարածելու համար։

ՄՈՒԿԴԷՆ, 26 դեկտեմբերի։ (Սեփ. Թղթ.)։ Եապօնացիներն աշխատում են գրաւել Գոուբանցզի-Սինմինտին երկաթուղին։ Ինկօուն փակվելուց յետոյ նրանք պաշարները կրում են նրանով և Ցինբանդաուից Շանգհայգուանին Ինկօու գծով։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ, 25 դեկտեմբերի։ (Ռէյտեր)։

Այսօր քաղաքից հեռացան 2000 պատերազմական գերիներ։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ, 26 դեկտեմբերի։ Գեներալ Նոգին Ստեսսելի հետ տեսակցելու ժամանակ ասաց վերջինին, որ ինքը միկադոյից հեռագիր է ստացել, որով յանձնարարվում է իրան ամենամեծ յարգանքով վերաբերվել Ստեսսելին և նրա օֆիցերներին՝ աչքի առաջ ունենալով նրանց զարմանալի անձնազոհութիւնը Ցարին և հայրենիքին։ Միկադոյի այդ ցանկութիւնն աչքի առաջ ունենալով, ռուս օֆիցերներին թոյլատրվեց սրերը պահել։ Ստէսսելը շնորհակալութիւն յայտնեց։ Նոգին խնդրեց Ստէսսելին հետ Պորտ-Արթուրում մինչև բոլոր կարգադրութիւնների վերջանալը Ռուսաստան մեկնելու վերաբերութեամբ և աւելացրեց, որ եապոնացիները միշտ թաղել են սպանված ռուսներին։ Ռուսների դիակները թաղված են յատուկ տեղում։ Նրանց քաջութեանը վայել արձան կը կանգնեցվի։

ՏՈԿԻՈ, 25 դեկտ.։ (Ռէյտէր)։ Գեներալ Նոգին հաղորդում է ռուս գերիների ցուցակը, որոնք երէկ պաշտօնապէս նորից հաձարվեցին —182 օֆիցէր և 7175 զինուոր։

ՏՈԿԻՈ, 26 դեկտ.։ (Ռէյտէր)։ Մինչև այժմ խօսք տուին 441 օֆիցէր։ Ստէսսէլը և Ռուսաստան վերադարձող միւս օֆիցէրները Նագասակի կը գան։

ՏՈԿԻՈ, 26 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ Եապոնացիները նպատակ ունեն Պորտ-Արթուրում շինել ծովային կայարան։ Տօգոն կը պաշտպանէ Պորտ-Արթուրը ծովից, իսկ Օյեաման հիւսիսից։ Զինուորական վարչութեան տրամադրութեան տակ միայն փոքրաթիւ բերդապահ զօրք կը թողնվի։ Էսկադրան եռանդով զբաղված է ականներ որսալով։ Դրանց թւի անաղին բազմութեան պատճառով այստեղի ջրերում լողալը դեռ երկար ժամանակ անվտանգ չէ։ Թոյլատրված է միայն կառավարական նաւերին անցնել։ Հաւանօրէն շուտով Դալնին չէզոք պետութիւնների համար կը բացվի։ Եապոնական շոգենաւային ընկերութիւնները հաստատում են շաբաթը մի անգամ երթևեկ։

28 դեկտեմբերի

ՏՈԿԻՈ, 26 դեկտեմբերի։ Շուտով բաց կը թողնվի 4-դ ներքին պատերազմական փ խառութիւն երրորդին նման պայմաններով։

ՏՈԿԻՈ, 26 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ Ստէսսէլը և Ռուսաստան վերադարձող միւս օֆիցէրները սպասվում են Նագասակիում դեկտեմբերի 29 ին կամ 30 ին։

ՍՈՒԴԱ, 26 դեկտեմբերի, (Ռէյտէր)։ «Օլեգ», «Իզումրուդ», «Դնեպր» և «Ռիոն» ռուսական նաւերի խումբը և «Գրօզնիյ», «Գրօմկիյ» ու «Ռեզվիյ» ականանաւերը գնացին դէպի Պորտ-Արթուր։

ՄՈՒԿԴԷՆ, 27 դեկտեմբերի։ (Սեփ. թղթ.)։ Ստացված օժանդակութիւններով եապոնացիներն ուժեղացնում են գլխաւորապէս Լեաօեանի և Անտ յի բերդանները։ Լուրերին նայելով, հոկտեմբերի 5-ից եապոնացիները կորցրել են Լեաօեանի և Եալուի գծի վրա 3000 ից աւելի մարդ։ Ռուսները կորցրել են՝ սպանված 7 օֆիցէր և 83 զինուոր և վիրաւոր 44 օֆիցէր և 1032 զինուոր։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 27 դեկտեմբերի։ Ֆինանսների մինիստրին հեռագիր են ուղարկել բօրսայի կոմիտէը և նաւագնացութեան ընկերութեան բաժանմունքը, որոնք խնդրում են անյապաղ միջոցներ, ձեռք առնելու Բաքուի գործադուլն անմիջապէս կանգնեցնելու համար, որովհետև նա սպառնում է Վոլգայի նաւագնացութեանը և նաւթավաճառութեանը։

ԲԱԴՈՒ, 27 դեկտեմբերի։ Նաւթարդիւնաբերողների և բանուորների ներկայացուցիչներից կազմված յանձնաժողովը կախել է նոր յայտարարութիւններ, որոնցով հաստատում է 9 ժամվայ բանուորական օր։ Մնացած առաջարկներն ընդհանրապէս մնացին առանց փոփոխութեան։ Գործադուլանողներին հրաւիրում են աշխատանքը վերսկսել դեկտեմբերի 28-ին, հակառակ դէպքում բոլոր բանուորներն ու արհեստաւորները կը համարվեն արձակված։ Թըւում է թէ գործադուլանողները պէտք է համաձայնվեն։

ՍԷՈՒԼ, 26 դեկտեմբերի։ (Բերլինով)։ Նրբանից յետոյ երբ կօրէական կայսրը հրամայեց զինուած ոյժ գործ դնել «Իլչինխոյ» ընկերութեան դէմ, վերջինի անդամներից շատերը ձերբակալվեցին և վիրաւորվեցին։ Դա առաջացրեց եապոնացիների միջամտութիւնը, որոնք ձերբակալում և տանջում էին «Իլչինխոյ» ընկերութեան դէմ գործող կօրէական օֆիցէրներին։ Այդ ընկերութիւնը եապոնացիներից ստանում է մշտական նիւթական օժանդակութիւն։ Երկրում տիրում է զօրեղ վրդովմունք։ Ապագայ դէպքերին սպասում են սարսափով։

28 դեկտեմբերի

ՊՕՐՏ ԱՐԹՈՒՐ, 26 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ Ռուս գերիները, որոնք սպասում էին գնացքին Շանցդինցզու կայարանում, կատարեցին Ծննդեան տօնը։ Կատարվեց ժամերգութիւն։ Քահանան պաշտօն մատոյց լիակատար զգեստաւորութեամբ։ Գերիների մէջ գտնվում է մի օֆիցէրի ուրթնամեայ աղջիկ։

ՏՈԿԻՈ, 27 դեկտ.։ (Ռէյտէր)։ Ենթադրում են, որ ռուսների կորուստները Պորտ-Արթուրում 25,000 մարդու չափ են։ Եապոնացիները զարմանք են յայտնում գեներալ Ֆոկի և միւս օֆիցէրների առիթով, որոնք հրաժարվեցին խօսք տալ և նախապատիւ համարեցին իրանց զինուորների հետ մնալ։ Ախտահանութիւնից յետոյ գերիների մի մասը կուղարկվի Կուրէ, իսկ մնացածները կը գտնվեն Մացուկամայում, Նագոյում, Խիմէյում, Կիօտօում և ուրիշ տեղերում։ Ռուս գեներալների հետ վարվում են հնար եղածին չափ լաւ։

ՇԱՆԴՀԱՅ, 26 դեկտ.։ (Ռէյտէր)։ Ռուս երկու նաւաստիների դէմ դատը շարունակվում է մի չինացի սպանելու առիթով։ Դատաստանը վճռել է, որ ոչ մի չինական ներկայացուցիչ ներկայ չը լինի գործի քննութեանը, որ կատարվում է ռուսական հիւպատոսարանում։ Ընդհանուր կարծիքն այն է, որ Չինաստանի վարքունքն անխնամ է, որովհետև չէ արդարանում դաշնագրով։

ԼՕՆԴՕՆ, 27 դեկտ.։ (Ռէյտէր)։ Լրագիրները լուր հրատարակեցին, որ չինական կայսրուհին հրատարակել է իրան «Քրիստիան-Սէյնտիստ» աղանդի անդամ, որը համարում է, որ հիւանդութիւնները գոյութիւն չունեն։ Այդ աղանդի անդամները բժշկվում են աղօթքների և զանազան ֆանտաստիկական գաղափարների շնորհով, որոնք քրիստոնէութեան հետ ոչ մի ընդհանուր բան չունեն։

ՊԱՐԻԶ, 27 դեկտեմբերի։ (Հաւաս)։ Հուլի դէպքի քննիչ յանձնաժողովը հաւաքվեց արտաքին գործերի մինիստրութեան մէջ։ Փոխադարձաբար իրար ներկայացվելուց յետոյ ծովապետ Շպաունը, իբրև աւագագոյնը, բռնեց նախագահական բազկաթոռը, շնորհակալութիւն յայտնեց ընտրութեան համար և առաջարկեց նախագահ ընտրել ծովապետ Ֆուրնիէին։ Առաջարկն ընդունվեց մրցայտ։ Ֆուրնիէն շնորհակալութիւն յայտնեց իրան ցոյց տրված ուշադրութեան համար, որն աւելի ևս քաղաքավարի է հանդիսանում, որովհետև Շպաունն իր արժանիքներով ամենայն իրաւունք ունէր նախագահական պաշտօնի համար։ Ֆուրնիէն ողջունեց Շպաունին և Դուբասովին և աւելացրեց, որ ինքն ու իր ընկերակիցներն զգում են իրանց վրա ընդունած բարձրագոյն պատասխանատուութեան ծանրութիւնը։ Նրանք կարող կը լինեն իրագործել իրանց պարտականութիւնները, անդադար ներշնչվելով խոհեմութեան և զգաստության այս վեհ օրինակից, որ ցոյց տուին աշխարհին Ռուսաց կայսրը և անգլիական թագաւորը, հիմնելով քննիչ յանձնաժողով։ Դրա երկարակեաց հետևանքը եղաւ ազգային ինքնասիրութեան անյապաղ հանգստացումը, ըստ հարման չքացումը և գործի բազմակողմանի և բարեխիղճ քննութեան հնարաւորութեան ապահովումը։ Վերջում յանձնաժողովը քննեց գործավարութեան եղանակի հարցը։ Ցերեկը կը դադարեցնեն երկրորդ նիստը, որի ժամանակ կը վճռվի, թէ արդեօք յանձնաժողովի նիստերը հրապարակային են լինելու, թէ ոչ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՍԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ՐՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ

Ն. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9 ից մինչև 12
Երեկոյեան » 5 ից մինչև 7
Վելիամինսկայա փողոց № 8։ (Ե.ո.) 59—100

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Ա. Ստեփանեան

Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելեամինսկայա փ. № 8.
ա. օ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԸՆԱԽՕՏՆԵՐԸ

ՀԻՊՕՔՐԱՏԻ—9—10 ժ. աչքի. նեարդային
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵՆՑ—10—11 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԵՍԵՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵՆՑ—1-1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱԼՕԼՕՎ ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԶԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ռ. ԹԱՐԽԱՆԵՆՑ—7½—8 ժ.
Պ. Ա. ԱՐԳԵԶԻԱՆ. Կատարում է միկրո-բիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհդի (խօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

Լոյս տեսաւ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

«ՊԱՏԿԵՐՆԵՐ»

«ՄԱՅՐԵՐԻ»

հետ մի գրքում։

Գինն է մի բուբլի։

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և հեղինակին Тифлисъ редакція «Мурчъ».

2—10

ՉՔԵՂ

Լոյս տեսաւ «ՇՔԵՂ»-ի Ե. պրակը, տասը գեղարուեստական նկարներով, արժէ 1 ր. 20 կ. տասնեակով գնողին հատը 1 բուբլի։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

մի այլ գեղարուեստական ընտիր հրատարակութիւն տպագրված խաւաքարտի վրա (քրիստոս կարտօն)

ՏԱԽՏԱԿ ՕՐԱՑՈՅՑ 1905 Թ.

Տ. Սիրանոյշի 30-ամեայ բեմական գործունէութեան յիշատակին, 30×40 սմ. մեծութեամբ, զանազան գերերի մէջ և քաղաքացիական տարազով։

Արժէ Թիֆլիսում . . . հատը 20 կ.
Իսկ դաւառների համար . . » 25 »

(Դաւառից 10 ից պակաս պատուէրներ չեն կատարվում),

իսկ 10 ից աւելին կը հաշվի հատը . 20 կ.
Ալբոմ և Օրացոյց միասին գնողին՝ Օրացոյցը կարժենայ . . . 10 »

Նպատակայարմար ազնական ընծայ կարող են լինել մեր Ալբոմները, Հայ գործիչների բաց նամակները (130 տեսակ—100 ով՝ 2 ր. 50 կ իսկ 1000-ով՝ միայն 20 ր.), Օրացոյցը և այլ ընտիր գեղարուեստական հրատարակութիւնները։ Շտապեցէք դիմել մեզ հետևեալ հասցէով. Тифлисъ, фототипія Гнуни—Маримъ. 8—15

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Զեռնարկութիւն Կայսերական թատրոնների արտիստ Լ. Դ. Դօնսկոյի

Այսօր, չորեքշաբթի, դեկտեմբերի 29 ին վրաց դրամատիկական ընկերութեան ներկայացում. բենեֆիս Ն. Պ. Զիսէիձէի։

Կը ներկայացվի

«ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ»

դրամա 5 գործ. հեղ. Սումբաթովի։

Սկիզբն է երեկոյեան 8 ժամին։

Վաղը, հինգշաբթի, դեկտ. 30-ին մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի կը ներկայացվի ՄԱՆՕՆ, օպեր. 5 գործ. երաժ. Մասսէնէի։ Ուրբաթ, դեկտեմբերի 31-ին, կը ներկայացվի I ՍԵՎԻԼՍԿԻՑ ՑԻՐՈՒԼՆԻԿ, օպեր. 3 գործ. երաժ. Բօսսինի։ II կօնցերտային բաժին։ Շաբաթ, յունվարի 1 ին 12 րդ գալա ներկայացում, կը ներկայացվի ԲՕԿԱՉՉԻՕ, կոմիք. օպ. 3 գործ. երաժ. Զուլենէի։

Տօմսակները ծախվում են։

Երդուեալ հաւատարմատար

Ս. Ս. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ

„Практическое Руководство“

для составленія бумагъ по дѣламъ Гражданскаго Судопроизводства въ ЗАКАВКАЗСКОМЪ КРАѢ, изд. 1904 года“.

Գինն է 1 բուբլի։

Վաճառվում է Թիֆլիսում. կենտրոնական, Խիդդէկելի և Գուտենբերգ գրավաճառանոցներում։ Հեղինակին դիմողներ՝ (Прис. повѣр. С. С. Меликъ-Адамову, Тифлисъ. Межевая ул., д. № 40) 10 օրինակից աւելի պատանդողները՝ ստանում են 20% զեղչ և ճանապարհածախս չեն վճարում։ ե. շ. 17—30

ԼԱՒԱԳՈՅՆ

ԾԱՂԿԷ

Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ

№ 4711

ՀՈՒՆՈՍԵԱՆ ՓՈՒՆՋԵՐ

Թաշկինակների համար գերազանց և տեղական էժանագին դուխի

Բոլոր ծաղիկների և մօդային հոտերով

№ 153 779 84 2—6
Ն. 6, դ. 1, 25, փ. 9, մ. 16. ա. 20

«ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ»

գրախանութում վաճառվում են Ալ. Քալանթարի տեսակ. ախտութիւնները.

«Մարդկային բներ», 5 կուտակ . 1 50
«Սասունցի Դաւիթ» Սասունի քաջերգով . — 20
«Կապ գիր» . . . . — 30
«Պատերազմի նամակներ» . . — 60
«Молочное хозяйство» . . . — 10

Դիմել. Тифлисъ. Книжный магазинъ „Гутенбергъ“ Г. Гаспарянцу. 10—10

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՔՈՒՄՊԱՀՈՒԹԻՒՆ և ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄ ՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ Ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։
Պարապմունքի առարկաներն են.

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական։ գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագրութիւն։ 6) Թուաբանութիւն համբիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Ռէմինկտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործիչ մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1905 թի յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4½ ամիս, ամենայն օր ճաշից յետոյ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абрамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 9—20

№ 288

Գարձրէք գործարանի մարկայի վրա «ԳՐՈՂ ԱՄՈՒՐ»

Ապպարատներ և պլաստինկաներ գնելու ժամանակ ուշք դարձրէք գործարանի մարկայի վրա «ԳՐՈՂ ԱՄՈՒՐ»

ԾՆՆԴԵԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԿԱՐ ՆՈՒԷՐ



Ստացվել են՝ ահագին քանակութեամբ պըլաստինկաներ, ամենանոր ժամանակնեռուս գրված, ամեն տեսակ երգեր և զանազան լեզուներով։

Գներն էժան են

Կօնցէրտային ժամբրանները 3 ռուբլուց սկսած աւելի թանգ գնով։

ՏՕՆԱՐՄ—ՀՍԿԱՅ
ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԳՐԱՄՄՕՖՕՆ“

TRADE MARK
"GRAMMOPHON"
ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԱՐԿԱՆ

Թիֆլիս, Գօլովինսկի պրօսպէկտ։ 4—10 Հեռախօս № 69.

Ապպարատներ և պլաստինկաներ գնելու ժամանակ

Բագուայ բաժանմունքում «Պարապետի վրա»

Եղբայրք ՄԷԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ

խանութում ստացված է մեծ քանակութեամբ ընծաների համար շքեղ արկղներ, երեխայի մկրտութեան համար զարդարված շապիկներ, պսակի սարքեր, ֆաղաններ, ծաղիկներ, մոմեր և այլն։ Կանանց գլխի սարքեր, աղլուխներ, չքիլաներ, հաշեաներ։ Շարունակ ստացվում են ձմեռվայ տաք ապրանքներ։ Դրսի պատուէրները կատարվում են ճշդութեամբ։

(Կ.Չ.) 28—30

Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան վարչութիւնը

յայտնում է. 1) ընկերութեան բժիշկներն են. ա) բժ. Ա. Պ. Կարապետեան (Միքայէլեան փող. 94) և բ) բժ. Ս. Ս Իստամանով (Բէհրութեան փող. 26)։ Ատամնաբոյժներ. ա) Ա. Աց Մայսուրեան (Վէլիամինովսկայա փող. 22) և բ) Գ. Ս. Կլէանսկի (Ելիսավէտինսկայա փող. 56)։ Բժշկական օգնութիւն ստանալու համար անդամները պարտաւոր են ունենալ տետրակներ, որոնք տրվում են ընկերութեան գրասենեակում (Դանովսկայա № 17) ժամը 5½-ից մինչև 8½ երեկոյեան։

2) Ընթերցարանը, ուր ստացվում են մինչև 30 զանազան հրատարակութիւններ, բաց է ամեն օր 7-ից մինչև 11-ը առաւօտեան և 6-ից մինչև 11-ը երեկոյեան կիրակի օրերը 9-ից—2-ը և 5-ից մինչև 8-ը։

3) Նախնական միանուագ վճարը՝ համաձայն ֆինանսների մինիստրի թոյլտուութեան՝ 5 ր. է առաջին կարգի անդամների համար և 3 ռուբլի 2 րդ և 3-րդ կարգի անդամների համար՝ փոխանակ նախկին 10 ռուբլու, իսկ անդամավճար առաջին կարգի անդամների համար տարեկան 15 ռուբլի, 2 րդ կարգի 10 ր. և 3-րդ կարգի 5 ր.

4) Վարչութիւնը պայմանաւորվել է դեղատների, զանազան վաճառականների, գործարանների և դերձակների հետ, ընկերութեան անդամներին որոշ զիջումներ անելու։ Այդ ֆիրմաների և տպած պայմանների տեսակները կարելի է ստանալ ընկերութեան գրասենեակում։

5) Համաձայն ընկերութեան կանոնադրութեան § 18 ի՝ խնդրվում է անդամներին վճարել երկրորդ 1904 թ. կիսամեակի անդամավճարը։ 2—5

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի պ. Նահանգապետը ներկայ դեկտեմբերի 30-ին առաւօտեան 8 ժամին նշանակեց ԹԻՖԼԻՍԻ ՄԷՇՉԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՅՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՕՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Թւով հարիւր մարդ, որոնք, ապա, 1905 թւի յունվարի 7-ին պէտք է ընտրեն 1) մէշչաններիի աւագին, 2) դրամական տուրքեր հաւաքող աւագին և 3) այս վերջինի տասը օգնականներին, նոյնպէս և այդ պաշտօնական անձանց իւրաքանչիւրի կանդիդատին։ Յայտնելով այդ մասին, Թիֆլիսի ոստիկանապետը, պ. Նահանգապետի հրամանով, խնդրում է Թիֆլիսի ձայնի իրաւունք ունեցող մէշչաններին, գալ դեկտեմբերի 30-ին ոչ ուշ առաւօտեան 7 և կէս ժամից պոլիցիական այն մասերը, որոնց շրջաններում բնակվում, ուր միաժամանակ—առաւօտեան ճիշդ 8 ժամին կը սկսվեն, պրիստաւների հսկողութեամբ, լիազօրների ընտրութիւնները։ Իսկ Մէշչանների Վարչութեան պաշտօնատար անձանց ընտրութիւնները կը կատարվեն 1905 թւի յունվարի 7-ին, առաւօտեան 10 ժամին Քաղաքային Վարչութեան դահլիճում, ուր այդ ժամանակ պարտաւոր են գալ այն լիազօրները, որոնց կընտրեն դեկտեմբերի 30-ի ժողովի համար։

ԲԺԻՇԿ Ս. Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7 երեկոյեան, իսկ տօն օրերին առաւօտեան ժամը 10—11. Սօլոլակի փող. № 6.

(ա. օ.) 27—50

Մելիք-Խախտամեան եւ ընկ.

Պուշկինեան փողոց առաջիկայ տօների առիթով առաջարկում է

ԼՕՌՈՒ ՄԵՂՐ

30 կ. ֆունտը, 11 ռուբլի պուդը կարագ I տեսակի 60 կ. ֆունտը։ Զանազան տեսակ պանիրներ։ 6—10

Լոյս տեսաւ և վաճառվում են

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

ԾՈՑԻ և ՊԱՏԻ 1905 Թ.

„ՇԻՐԱԿ“

Պատկերազարդ օրացոյցները

Ճոխ բովանդակութեամբ և գունաւոր տպագրութեամբ

(Եօթներորդ տարի)

Համառոտ բովանդակութիւնը



Ծոցի օրացոյցը պարունակում է ամենակարեւոր և օգտակար տեղեկութիւններ՝ տոմարագիտական, աստղաբաշխական, վաճառականական, գիտական, ժամանակագրական, պատմական, բժշկական, առողջապահական, կենդանաբուժական, գիւղատնտեսական, ճանապարհորդական, տնտեսական, օրէնսգիտական, բանաստեղծական, կենսագրական, երգիծաբանական, վիճակագրական, արհեստագիտական և այլ տեղեկութիւններ. նաև վիճակաբան։

Ունի առանձին յաւելուած «ԵԱՊՕՆԻԱ», ռուս-եւրոպական պատերազմի առթիւ։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ բացի օրացուցական և լուսնային տեղեկութիւններից պարունակում է իր մէջ ընտիր մտքեր և աֆօրիզմներ ականաւոր հեղինակների, եկեղեցական և ազգային տօների պատմական բացատրութիւններ, հեթանոսական սովորութիւններ, բժշկական և անասնաբուծական տեղեկութիւններ յայտնի հայ և օտար բժիշկների, խորհրդածութիւններ հեղինակաւոր հայ անձանց. ազգային քնար—բանաստեղծութիւններ, երգիծաբանական հատուածներ, եւրոպական ազգային սովորութիւններ, հայկական կեանքից նշանաւոր դէպքեր, տնտեսական խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւն, կենսագրութիւններ, անեկդոտներ հայ և օտար նշանաւոր մարդկանց կեանքից, առածներ, ժողովրդական երգեր, պարերգեր, լէլէներ, արկածալի դէպքեր Զէյթունի և Սասունի կեանքից և այլն և այլն։

Տախտակը ներկայացնում է մի գեղեցիկ նկար «Հայ բանաստեղծներ» իրանց գլուխ ունենալով, Խրիմեան հայրիկը։

«Շիրակ» օրացոյցները զարդարված են Աբովեանի, Նազարեանի, Նալբանդեանի, Բաֆֆու, Գամառ-Քաթիպայի, Ներսէս Վարժապետեանի, Մերենցի Յ. Պարոնեանի և Պէշիկթաշլեանի պատկերներով իրանց կենսագրութեամբ։ Մանրամասն բովանդակութիւնը ցանկացողները կարող են ստանալ ձրի։

ՊՐԷՄԻՈՒՄ. «Շիրակ» օրացոյցներից երկուսը միասին գնողները կը ստանան ձրի, իբրև պրէմիա, առանձին գրքով Յ. Պարոնեանի «Երգիծաբանական Հատուածներ» գիրքը, որը պարունակում է Պարոնեանի մի քանի սուր, ծիծաղաշարժ յօդուածները։ Պրէմիան առանձին կը վաճառվի 20 կոպէկով։ Պահանջեցէք «Շիրակ» օրացոյցները վաճառողներից և պրէմիան ձրի։

Ցանկացողները թող շտապեն, որ պատուէրները ժամանակին ճշդութեամբ կարողանանք կատարել։

Մեծ գումարով գնողներին լինում է մեծամեծ չափով զեղչ և մի և նոյն ժամանակ ճանապարհածախս չեն վճարում։

Գները՝ ծոցինը 20 կոպ., պատինը—50 կոպ.։

Դիմել՝ Александрополь, типографія «Ширакъ» Карапетъ Апинянцъ. արտասահմանից—Alexandrople, Karapet Apinian (Caucase)։

14—18 Կ. Ափինեան

1865. Մոսկվա 1870. Մ.-Գլուխ. 1882. Մոսկվա 1896. Նիժնի-Նովգ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ

ամենուրեք գործածվող հայտնի

ՊԱՐԳԱՏԻՊԵՐ

(GRAND-PRIX)
ՊԱՐԻԶԻ ՅՈՒՆՍՈՒՆԻՈՒՄ

արժանացաւ Ռուսաստանի համար

ՄԷՄԷՆՑ

ՈՒԷՍՏԻՆԳՀՈՒՍԷՆ
ԱՐԴԻՒՆԱՊՕՐՕՇՈՒԹԵԱՆ

ՈՍԿԵՐԻՊԱԿՆԵՐ

ՀԱՄԱՐ ՈՒՐԻՇ ՈՒՆԻՑԻՆ ԳՈՐԾՈՒԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԷՆԳԵԼՀԱՐԴ ՍՈՒՆԸ

Առևտրական Տունը

Ս. Պետերբուրգում, Մոսկվայում, Բրիստոլում (Ռօնի վրա), Խարկովում, Տաշկենտում և Եկատերինբուրգում, Բաստոլում, Օդեսսայում, Տուլում, Վարշավայում

27—80

Дозволено цензурою. Тифлисъ, 28-го декабря 1904 г. Հրատարակչ. «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Типогр. Т—в Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15.